

Կարծիք

Հայկ Արարատի Հովհաննիսյանի «Զապել Եսայանի վիպաշխարհը» թեմայով թեկնածուական ատենախոսության մասին

Ներածությունից, «Զապել Եսայանի սոցիալ-հոգեբանական փոքր արձակը», «Ժամանակաշրջանը և մարդը Զապել Եսայանի վիպաշխարհում» վերնագրերով երկու գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից բաղկացած, 135 համակարգչային էջ կազմող ուսումնասիրությունը թեմայի քննաբանման հաջողված նմուշ է: Ավտոռեֆերատը լիարժեքորեն արտացոլում է ուսումնասիրության կառուցվածքային և բովանդակային չափումները:

Ատենախոսը քաջատեղյակ է հարցի պատմությանը, որից մեկնարկելով՝ իր անուրանալի նպաստն է բերել Եսայանի վաստակի գնահատմանը՝ կատարելով նրա արձակի թեմատիկ հստակ բաժանում, ժանրային նույնականացումներ և ճշգրտումներ, Եսայանական կերպարները ենթարկելով բազմաչափ քննության: Ուսումնասիրության նորույթը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև Զապել Եսայանի գեղարվեստի արժևորումը արխիվային փաստաթղթերում և վավերագրերում արտացոլված գնահատումների և տեսակետների զուգահեռումով: Անհրաժեշտաբար պետք է նշել, որ արխիվային շատ նյութեր նորահայտ են:

Ավելի քան արդիական է ազգայինի և համամարդկայինի նուրբ աղերսներով, հոգեբանական խորաթափանցությամբ, քաղաքացիական խիզախությամբ, պետական մտածողության կարևորումով, ազատամտությամբ ու լայնախոհությամբ հատկանշվող Եսայանական կերպարի և գրի հանդեպ հետաքրքրությունը: Այն իրավամբ տեղավորվում է վերջին շրջանում Եսայան երևույթի գնահատման համաշխարհային շրջածիրում: Հիշենք միայն հայ գրագիտուհու՝ ամերիկյան պարբերականների կողմից կազմված ամենախիզախ կանանց վարկանիշային ցուցակում ընդգրկվելու փաստը, Փարիզի կենտրոնական փողոցներից մեկը նրա պատվին անվանակոչելու իրողությունը, կանադացի հետազոտող Վ. Ռոուի և թուրքական ծագումով բրիտանացի վիպասան ու լրագրող Է. Շաֆաքի գնահատականները՝ Եսայանի քաղաքացիական անվեհեր կեցվածքին ուղղված: Սույն ուսումնասիրությունն ընդլայնում է Եսայանի գեղարվեստի գիտական գնահատման

շրջանակը: Արդիականության փաստն առարկայանում է նաև Զապել Եսայանի տևաբար արգելված գրի նկատմամբ թարմ հայացքի անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրության առաջին գլխի «Նորավեպերը», «Պատմվածքները», «Վիպակները» ենթագլուխները մատնանշում են Եսայանի սոցիալ-հոգեբանական փոքր արձակի ժանրային հայտանիշները, որոնք ըստ անհրաժեշտության արժևորվում են ազգային և համաշխարհային գրական ավանդույթի համապատկերում: Իրավացիորեն շեշտադրվում են նորավեպի տիրականության պատճառը՝ կյանքի արագորեն փոփոխվող, դինամիկ ընթացքը գեղարվեստորեն սևեռող ժանրային նկարագիրը, և տղամարդկանց հոգեբանության խորքային բացահայտման Եսայանական խիզախումները՝ կանանց հոգեբանության և խնդիրների, տարիքային-հոգեբանական անցումների, կարգավիճակի փոփոխության պատկերումներին զուգահեռ: Հետազոտողը բացում է Եսայանական ֆեմինիզմի առանձնահատուկ նկարագիրը՝ իբրև ազատության ու իրավունքի, բայց նաև քաղաքացիական պարտավորվածության և մարդկային պատասխանատվության սկզբունքների ամբողջություն: Բարձր գնահատելով արձակագրի ոչ միայն նորավեպերը, այլև պատմվածքները և վիպակները՝ ատենախոսը գիտականորեն հիմնավոր փաստարկումներով անդրադառնում է նաև դրանց թերություններին, որոնց մեջ երկրորդական տեղ չունեն կառուցվածքային խնդիրները, քրոնոտոպային շփոթն ու դիպաշարային չարդարացված հապաղումները, պատկերակերպարային որոշ հապճեպ լուծումներ և, իհարկե, «քնարականության բարձր չափաքանակը», որը շեղում է ընթերցողի ուշադրությունը:

Երկրորդ գլխի ենթագլուխները ձևավորվել են Եսայանի կյանքի աշխարհագրական չորս հանգրվանների՝ պոլսյան, փարիզյան, կիլիկյան և խորհրդային միջավայրերի նկատառման հիմքով, և առկա նյութը դիտարկվել է նրա կենսապատումի նշված շրջանների պատմաքաղաքական իրողությունների և ըմբռումների, հասարակական գիտակցության վիճակի և մտահոգությունների, գաղափարահոգեբանական ընկալումների և գրամշակութային մթնոլորտի լույսով, անշուշտ, մեծ գրագիտուհու ինքնատիպ մտահայեցողության համեմատ:

Եսայանի վիպաշխարհի գիտական արժևորման ընթացքում Հովհաննիսյանի ուշադրության կենտրոնում շարունակաբար ու հետևողականորեն նրա գեղարվեստի ինքնատիպության որոնումն է: Դրա նշաններից են, օրինակ, արժանավորապես նկատված անմիջականությունը՝ «հեղինակ-ընթերցող ուղիղ կապը», իրականի ու գեղարվեստականի,

իրապատումի ու երևակայականի եսայանական համակցումները, «կինոյի լեզվով» պատմելու հնարանքը, Փարիզի հմայքի մոգական ազդեցությանը չենթարկվելով՝ այնտեղ առկա բացասական երևույթների ճշմարտացի պատկերումը, Պոլսի՝ «Ոսկեքաղաքի» արտաքին հմայքի և որոշակի խավի մարդկանց մանրության ու հետամնացության հակադրության մատնանշումը, եսայանական երգիծանքի կառուցողական բարեմտությունը, պարողիայի ողբերգականությունը և ապամիֆականացման ենթատեքստը, ազգային ողբերգության պատկերումներում դիտակետը փոխելու՝ հոգեբանորեն հաջողված փորձը՝ «Նոր հարսը» նորավեպի օրինակով, կերպարների հետագա ճակատագիրը առկախված թողնելու հնարքը: Ուսումնասիրողի ուշադրությունից չի վրիպել նաև եսայանական ինքնատիպ «թոթովախոսությունը»՝ առանձին պահերի դրսևորվող «ֆրանսերեն մտածելու և հայերեն գրելու» հանգամանքը, որն էլ պատճառ է դարձել պատումի արվեստի որոշ խոտորումների:

Աշխատանքում ուշագրավ դիտարկումներ կան Եսայան-Սիամանթո հնարավոր գրական առնչությունների կապակցությամբ: Համոզիչ են հեղինակի ինքնակենսագրական գեղարվեստական արտացոլումների և ինքնակերպավորման դրսևորումների մատնանշումները:

Հովհաննիսյանը կարողանում է առարկայորեն վիճել նախորդ հեղինակավոր մեկնաբանողներից մեկի հետ (էջ 81), կատարել հոգեբանական նուրբ ընդհանրացումներ՝ անցյալի ընկալման մեխանիզմի կապակցությամբ՝ մատնանշելով մանկական հիշողությունների՝ բացասական երևույթները ֆիլտրելու-ջնջելու առանձնահատկությունը: Նրան հաջողվել է մեկնաբանել նաև Եսայանի «խորհրդային կողմնորոշման» պատճառները՝ իբրև անձնագոհ հայրենանվիրման, պատմակշիռ հայացքի ու պետականամետ կեցվածքի արտահայտություններ: Եսայանի այդ շրջանի երկերում իսկապես նկատվում է ոչ թե խորհրդայնացման, այլ պետականության գաղափարի իդեալականացում:

Անվիճելիորեն հաջողված ուսումնասիրության կապակցությամբ՝ երկու դիտողություն-դիտարկում՝ դրա նկարագրի բարելավմանն ի խնդիր.

1. Հովհաննիսյանը կարողանում է աշխատել բանասիրական փաստերի հետ, դրանց հայտնաբերման, համադրման, խորքային դիտարկման շնորհիվ կատարում շահեկան ընդհանրացումներ, ծառայեցնում իր մեկնաբանական վարկածի

հիմնավորմանը, դրսևորում է նաև կերպարի հոգեբանական համոզության աստիճանի գնահատման հմտություններ: Ընդ սմին, ուսումնասիրության 83-րդ էջում կերպարի նկարագրի ամբողջացմանը ծառայող ուշագրավ դիտարկում է կատարում «ցավագին» ու «տրտում» կոշիկների պատկերի կապակցությամբ՝ որպես «հոգիի շարժումների», «թաքուն ըմբոստությունների» և «իրեններուն համար» «անսահման գորովանքի» արտահայտություն:

Պետք է մաղթել և հուսալ, որ այս դիտարկման հեղինակը պիտի ավելացնի գեղարվեստական պատկերի ընկալման ու գնահատման համանման նմուշների ծավալը՝ նվազեցնելով ատենախոսության առաջին գլխի որոշ էջերում տեղ գտած նկարագրական բաղադրիչը:

2. Աշխատանքում նկատվում է գեղեցկախոսության որոշակի հակում, որը ժամանակի ընթացքում վստահաբար կհաղթահարվի:

Ասվածը բնավ չի ստվերում ուսումնասիրության արժանիքները, այն լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, և ատենախոսը միանգամայն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
նորագույն շրջանի հայ գրականության բաժնի առաջատար գիտաշխատող,
ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և
գրաքննադատության ամբիոնի դոցենտ,
բ.գ.թ. Լիլիթ Սեփանյան



11.05.26թ.